

# ԻՐԱՎՈՒՆԿ

ԻՐԱՎՈՒՆԿ ԱՐԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Rev. Père G. Kalemkarian M. chitarist ngasse  
N° 4 Vienne

|                                                                                                                                                                                                                              |                                                                                                                                                                          |                                                                      |                                                                                                                                                                                                                                     |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <p>ԲԱԺԱՆԳՐԱԳՐՈՒԹԻՒՆ</p> <p>Պայթարիոյ համար Տարեկան 12 ֆր.<br/>» » Վեցամսեայ 6 ֆր.<br/>Առատահմանի համար (երկու քիւր միկ<br/>մարտի) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.<br/>Անդրիկայի » 2.60 տղ վեցամս 1.50</p> <p>ԿԱՆՈՒԻ ՎՃԱՐՆԵԼԻ</p> | <p>Համակ դրամ եռայն դրկի հետեւեալ հասցեով<br/>ИПРАВУНИКЪ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ. — ՎՍՈՒՆԱ (Պուլկարիա)<br/>Редация на ВѢСТНИКЪ<br/>„И р а в у н к ъ“<br/>ВАРНА (България)</p> | <p>Rédaction du journal<br/>„Ira vounk“<br/>V A R N A (Bulgarie)</p> | <p>Խմբագրութեան ուղղեալ գրութիւն<br/>եւ չեն դրկուիր եւ յարմար դատաւած-<br/>ները միայն կը հրատարակուին աւ-<br/>տոյնովին կամ մասամբ:<br/>Մանուցիական տղը 20 սանթիմ. երե-<br/>կեան աւելի անգամներու համար 20 0/0<br/>զեղչ կը լինի:</p> |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

ԹՈՒՐԲԻՒՆ

Սուլթանը իրապէս շատ տեն-  
դոտ եւ մտահոգ չըլլանի մը մէջ  
կը գտնուի: Ծայրագոյն արեւել-  
քի խնդիրը եւ Չինի սահմաննե-  
րուն վրայ Ռուսիոյ ունեցած թղ-  
թաղանթները, Ս. Բեթիւրպուրկի  
քահանայ Պապը Ալիի ըրած պա-  
հանգիստները չմեղմեցին: Չարին  
կառավարութիւնը Հայոց նկատ-  
մամբ ձեռք առած քաղաքականու-  
թիւնը նոյն թափով կը շարունա-  
կէ, որուն ապացոյցը տուաւ Կ.  
Պոլսոյ Ռուս դեսպան Պ. Չէնո  
վիկի իր վերագործին յաջորդա-  
բար երկուք եւ Պապը Ալի տը-  
ած պաշտօնական այցելութիւն-  
ներու միջոցին:

Կովկաս ապաստանած Հայ գաղ-  
թականներու խնդիրը եւ անոնցմէ  
յաջորդականութեամբ վերագործնե-  
րու հարցը ու Հայաստանի վիճա-  
կին միանգամ ընդ միշտ ապահո-  
վութիւնը Լորէն մէջտեղ դրուե-  
ցան: Ճիշդ հայկական խնդիրն  
այսպէս անակնկալ կերպով Ռու-  
սիոյ կողմէն յաջողած ու հրապա-  
րակուած միջոցին, հետագիւրդեր  
մեջ կիսապիտան շահե Ռուս պատե-  
րակական նախարարին կովկաս  
այցելութիւնը, Կովկասեան եւ  
առասովորք սահմանագլխին մօտ  
գտնուող ռուս բանակները աչքէ  
անցնելու համար:

Ռուս պատերազմական նախա-  
րարին այս քննական պատյառը կու-  
գայ շեշտել Ռուսական կառավա-  
րութեան պահանջին կարեւորու-  
թիւնը, երբ շատ լաւ գիտենք  
թէ Անատոլիոյ նկատմամբ Ռուսա-  
կան դիտումներուն միայն կովկա-  
սեան բանակը կրնայ գործնական  
հանգամանք մը տալ:

Ռուսական այս խորտուր ոչ  
միայն երկուք եւ Պապը Ալի յա-  
նախկալաւ ահաբեկած է, այլ նոյն  
խիւստի Անատոլիոյ հայկական  
գաղութներու մահմետական տար-  
րին մէջ տիրող սահմանադրութիւնը  
մեծ եղած է Ռուսական խիստ  
մօտաւոր տարաբանութիւն մը վախի-  
ն տպաւորութեան տակ, ինչպէս կի-  
մացուի իրազեկ ազդեցութիւնը:

Երկուք, Անդրիական պաշտ-  
պանութիւնը մը յայտը կտրած այս

անկում ալ գիտած է իր բարեկամ  
Վիկտոր Կայսր: Խնդիրով ա-  
նոր ձեռնտուութիւնը ներկայ ձա-  
խող դրութեանէն գուրա գալու հա-  
մար: Երան ի պատասխան վի-  
ճելով դիտել տուած է Սուլթանին  
թէ ներկայ տխուր կացութիւնէն  
գուրա ելնելու միակ ճամբան թուր-  
քիոյ քրիստոնէից գահադաւաճ աւ-  
րուելուն մէջ է:

Սուլթանի գերման կայսեր այս  
վճռական պատասխանը պիտի զօ-  
րէ թուրքիոյ վիճակը փոխելու,  
ինչպէս որ պէտք է, երբ Սուլթա-  
նը բացարձակ վարիչն է երկրին:  
Հայոց մը որուն պատասխանը գրե-  
նիլը զօրաւ չպիտի ըլլայ:

Սուլթանին մօտաւորապէս  
քառուրդ դարու իշխանութեա-  
նը միջոցին անցած դարձած դէպ-  
քերը ցոյց տուին յայտնապէս իր  
վիճակաւորական եւ նոյն իսկ անձ-  
նական տրամադրութիւնները եւ  
սկզբունքները: Հանդէպ երկրին  
եւ ժողովուրդին, մանաւանդ քր-  
իստոնեայ տարրին:

Այսօր Սուլթանը իր 25 տմեայ  
թէ ներքին եւ թէ արտաքին քա-  
ղաքական սկզբունքները այնպի-  
սի վիճակ մը ստեղծած է, որ-  
կէց դուրս ելնելու համար նոյն  
իսկ ինքն ալ անկարող պիտի  
ըլլայ: Եթէ պահ մը անկարե-  
ւին կարելի ընդունելով, ենթա-  
դրենք թէ Սուլթանի տրամադ-  
րութիւնները հիմնական բարեշը-  
ջում մըն ալ կրնն:

Գրեթէ այսօր թուրք պաշ-  
տօնէութիւնը մազուելով, միայն  
գործի զուլա մնացին այնպիսի-  
ներ, որոնք առաւել կամ նուազ  
վիճակեղանք կը ներկայացնեն իր  
խսկութեամբ:

Երկրին մահ սպառնացող վերքը  
բուժելու նախնական դարձանը  
չափ պարզ է: Նախ այդ պաշտօ-  
նէութիւնը գրեթէ ամբողջովին  
նետելու մէջ կը կայանայ: Երբեք  
երկար տարիներ բարձրագոյն հը-  
րամանով ըրին ան ամեն բաները,  
ուրիշ սուր կերպով թուրքիոյ  
գլխուն ծնան մէկէ աւելի միջազ-  
գային բարդ խնդիրներ: Երբեք  
այսօր կը մնան Հայկական, Մա-  
կեդոնական, Ալպանական հարցե-  
րը: Դիւանները թուրքիոյ գլխուն  
տրուած միայն բիրտ հարուածնե-  
րու հետեւանք գէշ աղէկ կուժուած

են: Եւ այդ թիւք պաշտօնէու-  
թիւնն է որ քաղաքականացաւ ու  
վարձատրուեցաւ, թէ՛ պաշտօնա-  
պէս եւ թէ՛ անպաշտօն կերպով:

Ուրիշն նոյն այս տեսութիւնը  
կը բաւէ անգամ մ'ալ մեզ համ-  
զելու թէ, խորհուրդներն ու խը-  
րատները չեն որ թիւքիոյն պիտի  
փոխեն, այլ գործնական միջոցնե-  
րը որոնց դարձագրութեան ժամը  
չափ հեռու չէ, թէ՛ քաղաքական  
հաշիւներով եւ թէ տնտեսական նը-  
կատումներով գոր ունին եւրոպա-  
ցիք հանդէպ թուրքիոյ:

Մարտիոյն նոր սակագոյցն ալ  
կուգայ նոր զօրաւորութիւններ հա-  
նել թուրքիոյ գլխուն: Պալքուն-  
եան պետութիւնները, բացի Պուլ-  
կարիայէ, կը շարունակեն իրենց  
բողոքը Պապը Ալիի այդ տնօր-  
նութեան դէմ եւ մինչեւ իսկ թուր-  
քիոյ յաւիտեանպէս հաճոյակատոր  
Ռուսմանիոյ յառաջ գացած է ըս-  
պառնալիքներ ընելու չափ:

Հայկական ջարդերու տեսնելու  
նախորդի մէջ վրաստան տեսնելու  
հպատակներու կրած վնասին հա-  
տուցման խնդիրն ալ մտած չէ:  
Պոլսոյ Ամերիկեան դեսպանատան  
թարգմանի օրէ օր իր գիտումնե-  
րը կը կրկնէ եւ մօտ է որ Եանքին  
գիտնադէտը իր վերջնագիրը տալ  
Դրան եւ հրաման տրուի թուր-  
քիոյ ջարդերը յառաջանալու Ամե-  
րիկեան մարտանաւին որ կըսպա-  
սէ Միջերկրականի մէջ:

## ԶԻՆԱՍՏԱՆ

Քաղաքակրթութեան եւ անքա-  
ղաքակրթութեան կռիւնն է որ կը  
մղուի: Այսպէս կը սահմանեն այն  
միջազգային արշաւանքին նպատա-  
կը, որուն ենթակայ է Չինաստան:  
Այդ արշաւանքին ելքը քիչ մը  
ուշ կամ կանուխ, վերջնական բա-  
ժանումը ըլլալուն հաւանականու-  
թիւնը օր ըստ օրէ աւելի կը շեշ-  
տուի:

Միջազգային զօրութիւնը եր-  
թալով կաւելալ Երկնային կայս-  
րութեան մէջ՝ եւ ծանրագոյն վեր-  
ջաբան ալ նոյն համեմատութեամբ  
կը մօտենայ: Այդ զօրութեանց  
բազմապատկուիլը ինչ աստիճանի  
որ կը մեծցնէ Չինի գլխուն վրայ  
պտտող սպառնալիքն ու փորձան-  
քը, նոյնչափ ալ մեզ եւ արեւմուտ  
քը անհանգիստ ընելու բնոյթը

կրնայ ունենալ, քանի որ հակա-  
ռակ տէրութեանց այսօրուան միա-  
սին գործակցութեանը, հիմնական  
համաձայնութիւն մը տակաւին գո-  
յութիւն չունի իրենց մէջ:

Եթէ երբեք այդ բարեբար հա-  
կըցողութիւնը Բէքինի պարիսպ-  
ներուն առաջ չը գոյանայ, այն  
ատեն հաւանորէն պիտի սկսին Ե-  
րեւնալ այն կայծերը, որոնք տի-  
եղեբական պատերազմ ըսուած մեծ  
կրակին առաջին նշանները պիտի  
ըլլան, կրակ մը որ ծայրագոյն  
Արեւելքէն բռնկելով մինչեւ ծայ-  
րագոյն Արեւմուտք անկասկած պի-  
տի քալէ, եւ ամեն կողմ քիչ կամ  
շատ պիտի վնասուին:

Բայց պիտի համաձայնուին թէ  
ոչ Չինական խնդիրը միանգամ  
ընդմիջող վերջացնելու համար: Այս  
Գլխուն եւ ամենէն շահեկան հար-  
ցըն է որ Ծայրագոյն Արեւելքի  
խնդրին հետ կը ներկայանայ եւ  
լրջօրէն կը առնուի լուրջ մտքերը:

Այսօր Չինի մէջ ձեռք ձեռք  
տուած գործակցող տէրութեանց  
շանքն ալ նոյն նպատակի շուրջը  
կը գառնայ, այդպէս կը հաւաս-  
տուին հարապակի ազդեցութեան:  
Բայց չը սխալելու համար եթէ եր-  
բեք դրական եւ հաստատ երեւոյթ  
ները նկատողութեան առնել ու-  
զենք, գտնելու համար այն հաւա-  
նականութեան աստիճանը միջազ-  
գային համեմատութեան մասին,  
իրաց ընթացքը բաւականաչափ  
գոհացուցիչ չպիտի երեւան մեզ,  
թէեւ ոչ ալ ծայրայեղօրէն վրդո-  
վիչ:

## ԳԵՐՄԱՆԻԱ

Վիկտոր Կայսրը վերջնականա-  
պէս ստորագրեց նաւատորմին յա-  
ւելման հրամանագիրը: Քիչ ատե-  
նէն գերման նաւային ուժը կստա-  
նայ այնպիսի առաւելութիւն մը  
որով ծովային քաղաքականու-  
թեան մէջ մեծ փոփոխութիւն մը  
առաջ կուգայ ինչպէս եղաւ եւ-  
րոպական միջազգային աշխարհա-  
վարութեան ուղղութեան մէջ, երբ  
ծնաւ Ալման կայսրութիւնը:

Գերմանիա միաժամանակ կաշ-  
խատի իր յարաբերութիւնները  
կարեւորութեան սահմանին մէջ մը-  
շակել ֆրանսայի հետ եւ այսօր




Ֆրանսացիք սկսած են զերմանե-  
րու... հետ աւելի պաղ ըլլալ քան  
թէ թշնամի: Գերմանիա՝ որ  
Ֆրանսայի հետ բարեկամանալու  
մէջ մեծ շահ ունի հաւանական  
է որ ձեռք բերէ օր մը զայն Ռու-  
սիոյ հետ իր յարաբերութիւնները  
մշակելով և համազօրով Ֆրանսե-  
րը որ Ալմանիերն ալ իրենց կար-  
գին Ռուսաց բարեկամներն են:

ԱՓՐԻԿԷ

Ափրիկէի շուրջը բաներ մը  
կանչնին կը գտնան, բայց տա-  
կաւն մով թէ մէջ. Թրանսվալի  
պատերազմին պաշտօնագէտ վերջ  
արեւելէ կարք: Ափրիկէի մէջ  
Անգղիոյ տնտեսական զոհը Հա-  
պէշը սահմանաւ րլլալ կերեւի:  
Այդ տնտես խափշիկին երկիրը  
Ափրիկէի անգլիական ստացուածք  
ներսին մէջտեղերը ինկած ըլլա-  
լուն համար: Այսօր Հարաւային  
Ափրիկէի գրաւելէն եւ Եգիպտոսն  
ու Սուտանը տնտեսկէն յետոյ  
տնտես կապակցութեան միակ յար-  
արգիւքը Հապէշի ստանն է, հե-  
տեւաբար Անգլիոյ մէկ զլիստոր  
խաշնդար Ափրիկէի մեծագոյն եւ  
գերակշիռ մասին տիրանալուն:  
Անգլիոյ Ափրիկէի մասին իր հե-  
տեւելիք ապագայ քաղաքականու-  
թեանը կէտ նպատակը որոշած է  
այսօրուրնէ, այն է Մէնէլիքի հետ  
կռուի մը բռնախի: Իրեն հետ առ-  
շուշտ պիտի տեսնենք իտալիան  
ալ միացած: Կը մշակուի այդ գա-  
ղափարը և կ'ստանա միասնական  
գործադրութեան միջոցները: Այս  
շուրջը սկսած է պտտկիւ միջազ-  
գային գահճեմերուն մէջ:

Ա.



ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ԲԱՐԻՉ, 16 Յունիս

Վճարվիլի բնագործակ սրահին մէջ  
կատարուած այսօրուայ խորհրդաւոր  
յուզիչ հանգէսը, . . . Բարիքի է՛ն  
ակամակաւոր դերասաններու անձ-  
նուէր աշակցութիւնով տրուած Բե-  
րեկոյթը «Հայ որբերու տօն-ի տօնու-  
թիւնն» եղաւ. Հայ ազգի թրթռա-  
ցնող անունը անգամ մը եւս հին-  
չուեցաւ այս մեծ ազգի, մեծ մա-  
քաղաքին մէջ. . . այնպիսի նը-  
պատակաւորմար պահու մը, մինչ աշ-  
խարհ հոն խառնած է, տիեզերք աշ-  
քը հոն տնկած, ակամակ լարած էր  
բան մը լսելու, բան մը կարգաւոր  
համար:

Ներկայացումն անմիջապէս յե-  
տոյ, յափշտակուած, առեցնուած ու-  
րախութիւնով ապաւորութիւններու  
միայն պիտի հաղորդուէ. վաղը, տե-  
ղական եւ հայր բարեկամ թերթերը  
շարունակ հինգ ժամ տեւող հազուա-  
դէպ այս անակնկալին վրայ բնագոր-  
ծակորէն, մանրամասնօրէն պիտի գը-  
րեն:

Այս նուիրական նպատակի իրա-  
գործման, յաջողութեան համար, այս  
հոգեբանական տեսարանի շուրջ բնա-  
կանաբար պիտի բոլորուէին Անաթոլի-  
ժրանի պէս ազգայնիկ բանաստ մը,  
Մուշէ-Սիւլիւի, Բորլէն-էնէի, Ան-  
թուանի, Սիւլիւի, Նոթէի, Ալպէր  
Լամպէր-Ֆիշի եւ գիտ քանի՛ հաշակ  
վախճող դերասաններու ընտրուած  
խումբ մը, Տիկին Ռեթմանի, Տիկին  
Ռեկոն-Վէպէրի, Օր. Մարեան Ֆլակի  
նման ազնուաւոր դերասանուհիներ-  
ը որոնք իրենց հետ ունին Գաղ-  
ղիայի համակրութիւնը. հաւ թէ ին-  
չո՞ւ յաջողեցաւ, եւ իր տեսակին մէջ  
եղաւ միակը, կատարեալը:

«Մարդկան եւ քաղաքացիական իրա-  
ւանց ընկերութեան» պաշտպանու-  
թիւնը յաջողութեան գրաւականներէն  
մին եւս է:

Խոհանոցներն պատրաստուած գործ  
մը, որ Զօպանեանի եւ Իւրայնոց զԸԼ  
խաւոր փառքերէն մին եղաւ:

Ներկայացման մանրամասն նկարա-  
գրութիւնն Զօպանեանի թողնով, որ  
Անահիթի միջոցաւ՝ անոր ներկայան-  
ու բարոյական արդիւնքի մասին գրէ  
ընդարձակօրէն, յարգելի Անաթոլի-  
ժրանի բանաստութեան (կանխաւ  
ամերիկեացի Ֆիկարօի երեքշաբթի օ-  
րուան թիւին մէջ) երկու գլխաւոր  
կէտերն չեղան:

Ամբողջ բանաստութիւնը, Հայկա-  
կան կոտորածներու ոճագործ կառա-  
վարութեան մը կանխամտածութիւն-  
ներով սխիւթեմ քիթը ման կատարուի  
լը բացորոշ կերպով կապացուցանէ:

Իրականութիւններու պատմութիւ-  
նը քրաւ ան, մեծ մարգերու յատուկ  
որոշիչ չեղանով մը. կարգաւէ աւելի,  
լսել կարժէ բանաստութիւնը այդ  
մեծ մարդու բերնէն, որ արգահատան  
քի ուժգինը, նախատինքն, զգուսն-  
քի, ամօթի Գալիլայիքը, դատապար-  
տութեան լախար կիջեցնէ բարբառոյ  
կառավարութեան մը գլխին, . . . ա-  
պացուցանել վերջ՝ սուր ներկայացա-  
բանութիւնով կը բացագանչէ. «բուն  
ոճագործը անունը չեն, այլ ինքը կա-  
ռավարութիւնն է»:

Ոճագործութիւնն հրամայողը կա-  
րելի՞ բան է որ յաջողէ վայրկեանին,  
եթէ գործադրողները արիւնխաւոր ոճ  
բագործներ չլինէին: Սակայն բանա-  
խօսը, որքան հոգեբան, չէ ուսում  
նասիրած այդ ոճագործը ազգի հոգե-  
բանութիւնը. մօտէն, իր երկրին, հա-  
րէմին մէջ:

Շատ խոր ապաւորութիւն թողուց  
բանաստութեան վերջին սա կտորը,  
զորն որ կը գնեմ հոս թարգմանաբար:  
«Լիւթանացի ծերունի մը, տիւրքիւ  
հեծելազօրքէն մահուան վիճակի մէջ  
ձգուած էր իր տան տնջիւ. գլուխը  
կը վերցնէ, եւ իր որդին կանչելով  
կըսէ. Իւսէֆ կըրդուրնցնեմ քեզի,  
որ երբ Ֆրանսայի քրիստոնեաները  
իրենց Լիւթանաւու եղբայրներուն օգ-  
նութեան համար, եկուր չիբրիս մօտ  
ծուր գիր եւ մրմնջէ ականջիս, որ  
ես եւս հողին ներքեւ խայտաւ Լի-  
բանանի հետ»:

«Այսպէս խօսեցաւ ու մտաւ. քիչ  
վերջ Իւսէֆ Գաւաթը վաղեց իր հօր  
գերեզմանը, «Հայր հանգչէ խաղող  
եւ ուրախ. յոյզը ի դերեւ չեղաւ.  
Գաղղիացիներն եկան եւ մեր ազգը  
մխիթարուած է»:

«Այսօրէն ի վեր, Տորոսի գաղաթէն  
մինչեւ Արարատի բարձունքը 300000  
դոներ ինկան, որոնց ստուերները  
զայրացկոտ մեզ կը կոչեն»:

«Դուք չհասաք ու մենք մեռանք,  
եւ մեր գաւառները կը մեռնին. գոնէ  
մեր որբ գաւառներուն հաց տուէք,  
որ ննջենք խաղաղ ու անգործ»:

Շատ խոր եղաւ ապաւորութիւնը  
ունկնդիրներուն վրայ. որք իրենց  
հացը բերած էին, խանդապատանքով  
չաղուած: Արցունքի կաթիլով ցողե-

ցին. —Առ՛, սուր որբերուն դոն-  
ցին. սակայն նա պիտի մեռնի եթէ  
այլաբար չցնցէք, որ հասնի կեանք  
եւ ազատութիւն տալու այդ որբա-  
ցած ազգին»:

«Մեր հացն անոնց փուշ պիտի լինի  
այս մարտիրոսացումի վայրկեանին.  
նա թէեւ հաց կը պտալ, ազատ  
կեանք կամ մահ կաղաղակէ, առ Ա-  
նաթոլ մեր հացը, հայ որբերուն տու-  
որ ոյժ ունենան տոկալու քիչ մը  
եւս . . .»:

Սրան լեցնող բազմութիւնը, հայ  
ազգի մասին ունկնդրեց հաճոյքով  
հակառակ սաստիկ ջերմութեան, որ  
անտանելի էր դարձած. կարծէ որ  
Իւրաքանչիւր ներկայացումի եւս աշ-  
տասանութիւններու վրայ գրուի  
Մուշէ Սիւլիւի եւ Տիկին Ռեթմանի  
բերն սքանչելի էին:

Արշակ իր «օրօր»ը գրած տետ-  
այնպիսի խառնախառ չէր, որքան Տի-  
կին Վէպէր Պրահոզը արտասանած  
պահուս, օրօրը մայրեր միայն գիտն  
չուէր:

Պարոն Սվաճեան, իրերափառութեան  
հանձարը եկած էր ցոյց տալու, իր  
որբ եղբայրներու հաց բերող բարե-  
սիրտներուն:

Պ. Զօպանեան թէ ինչու կը սըլը-  
տայ եղբի Բարիքի պուլլարներուն  
վրայ»:

Արշակին հետ երբեք երբեք խօսած  
եւ յարաբերութիւն իսկ ունեցած  
չեմ. յարմար առթիւ մը զինք պիտի  
երթամ շնորհաւորել այս մեծ յաջ-  
ողութեանը համար: (\*\*)

Դիւրին չէ այսքան ուժեղ մէկտեղ  
հաւաքել. իր աշակերտներն ալ արժա-  
նի են շնորհաւորութեան:

Մեր երախտագիտութիւնը այս հայ  
որբերու տօնին մասնակցող բանա-  
խօս-գերաւաններուն եւ «մարդկային  
ու քաղաքացիական իրաւանց ընկե-  
րութեան» որ իր պաշտպանութեան  
տակ առաւ իրաւունքի այս խաղի  
որուն կը ձգտի միշտ եւ կը հասնի  
ուժ տալ հոն, ուր իր սկզբունքը  
կազմող արդար իրաւունքը պաշտպա-  
պանի կը կարծուի:

Հ. Ա.

Բարիք, յունիս 26

Չինաստանի պատահաւորներ

Պ. Սէսի՝ տը ժողովուրդի թիւ:

(\*) Նշանակելի էր բաւական թուով  
հայերու ներկայութիւնը: Հ. Ա.

(\*) Ականջը խօսի այդ սուտը յոր-  
նող սուտիկէ-Տօթթօրին: Մ. Խ.

ՅԱՆՑԱՆՔԸ ՈՐՈՒՆ Է

Ա.

28 ՄԵՏՈՒԿ ԻՐԵՂԵՆԵՐՈՒ ԽԱՉԱՒՈՒ-  
ՂՈՒԹԻՒՆ

Յեղափոխութիւն սուրբ է. յեղա-  
փոխութեան զինուորներ, մաքուր,  
անկեղծ եւ անձնուէր պէտք է ըլլան:  
Գերի եւ սարուկ ազգերու բարօրու-  
թեան եւ ազատութեան միակ միջոց  
միշտ յեղափոխութիւնը եղած է եւ  
պիտի ըլլայ:

Խիստ ցաւալի է ըսել թէ վերջի  
տարիներս մեր յեղափոխական գործը  
հետզհետէ այնպիսի կերպարանք մը  
ստացաւ որ այսօր ժողովուրդի մէկ  
մասը բոլորովին տարբեր կերպով կը  
վարուի դէպի այդ սուրբ գործը եւ  
այդ գործի զինուորները. այսինքն  
90-96 թուականներու բաղադրամար  
բոլորովին հակապատկերն է:

Այդ քննադատութիւնը ընել եւ

պատճառներ քննել երկար ուսումնա-  
սիրութեան պէտք ունին, հետեւաբար  
զանց կընենք. բայց միեւնոյն ժամա  
նակ մենք ուզատ ենք մեր անհատա-  
կան համագումարը եւ կարծիքները  
յայտնել:

Իրենց ազատութիւն եւ անկախու-  
թիւն ձեռք բերող ազգաց պատմու-  
թիւններ երբ կարգաւէ պիտի տես-  
նենք որ իրենց յեղափոխական աս-  
պարէզի մէջ գտնուած ենք բաղդա-  
խաղիներ, նամակներ, չահախաղի-  
ներ, խաչագողներ, գաւառներ եւ  
մասնիկներ. բայց միեւնոյն ժամա-  
նակ պիտի տեսնենք որ այդպիսիներ  
իրենց արժանաւոր պատիժներ կրած  
են:

Դժբաղդաբար մեր մէջ ալ գտնուե-  
ցան այդպիսի վատ եւ ստոր արա-  
բաններ, որոնք այդէն վաղուց առի-  
թի մը կըստաւին իրենց չահատա-  
կութիւնները ի գործ դնելու, ժամա-  
նակի հասած նկատելով՝ դէմքերուն  
զիմակ անցուցած, աղգասիրական եւ  
հայրենասիրական սկզբունքներու ու

գաղափարներու մարմնացումի ճիշ-  
ուութեամբ, անկեղծի եւ անշա-  
հախաղի յատկութեամբ, անձնուէրի  
եւ անձնագործի պատրաստականու-  
թեամբ, իբր իրենց ստուկ եւ տա-  
նապիտ եղբայրներու ցաւերուն եւ  
վիշտերուն ցաւակից, յանուն իրենց  
ազգի եւ հայրենիքի ազատութեան,  
չարչարուելու, բանտարկուելու եւ  
մեռնելու պատրաստ՝ անկեղծ եւ մա-  
քուր զինուորի մը պէս եկան եւ ինք  
զինքնին յեղափոխական ասպարէզին  
մէջ նետեցին, ճիշդ գառնազգեստ գայ-  
լերու նման: Չը մոռնանք ըսելու  
նաեւ այնպիսիներ ինքզինքնին բար-  
ձր խելալի մը տէր (.) կը ցուցնէ-  
ին:

Վերջէն տեսնուեցաւ որ այդպիսի-  
ներ գոնէ անուս եւ պարզ զինուորի  
մը չափ անկեղծ եւ մաքուր ըլլալու  
ազնուութիւն չունեցան եւ անուս ու  
պարզ զինուորը իրաւունք ունեցաւ  
իրեն թոյլ տալու այդպիսիներուն ը-  
սելու. «Թեւ իմ խելքիդ» ուսմանդ  
եւ գրչիդ ալ վրայ»:

Յանցանքը որունն է. —ժողովուր-

դին թէ զիմակաւորներուն:

Դիմակաւորները յանցաւոր չեն.  
քանի որ անխղճութեամբ իրենց ար-  
հետ ընտրած են կեղծել, կողպտել  
ժողովուրդի արիւն քրտինքով ժող-  
ված սանթրիներ կողքի եւ այդ գու-  
մարը իրենց չուայլ եւ հանգիստ ապ-  
րուստին յատկացնելու. այո՛, յան-  
ցանքը ժողովուրդինն է որ այդպի-  
սիներու սխաղագործութիւնները տե-  
նելով եւ գիտնալով հանգերձ կ'ապա-  
պանէ եւ այդպիսիներու աղտոտու-  
թիւնը վարագործով մը ծածկելու հա-  
մար ամեն ճիգեր կը թափէ եւ ամե-  
նէն ստոր միջոցներ չի խնայեր, պարզ  
գործիք մը եւ դասալիք մը ըլլալով.  
մինք այդպիսիներուն ամենայն հա-  
մարձակութեամբ կըրենք. «Նման գը  
ման սիրէ»:

Մենք այնպէս համոզուած ենք թէ  
որչափ որ կեղծ յեղափոխականներ  
անպատիժ մնան եւ ասպարէզէն շը-  
տաքսուին, այնչափ ալ այդ կեղծա-  
բարներու թիւը պիտի բազմանայ:  
Այդպիսիներու գիմակներ պատուելու  
է, հրաչէ կըրալով իրենց ճակոխ







